ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ
Արձանագրություն թիվ 3 «22» 02 2017թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով գիտության գծով պրոռեկտոր պրոֆեսոր Կ.Բ.Ենկոյանի «2015-2016թթ գիտական գործունեության հաշվետվությունը և զարգացման հեռանկարները» վերնագրով զեկուցումը,

Որոշում է.

1. ԵՊԲՀ գիտական գործունեության աշխատանքները գնահատել բավարար:
2. Հանձնարարել պրոռեկտոր պրոֆեսոր Ենկոյանին՝ մշակել և ներկայացնել.
2.1 համալսարանի միջազգային գիտական ասպարեզում ճանաչելիությանն ուղղված ծրագիր և գործողությունների պլան,
2.2 համալսարանի գիտական անձնագիր ծրագրային փաթեթ
ա. պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար,
բ. ասպիրանտների և հայցորդների համար,
գ. ուսանողների համար,
2.3 համալսարանի գերազանցության գիտահետազոտական կենտրոններ ստեղծելու նախագիծ ըստ գերակա ուղղությունների՝ հիմքում դնելով գիտահետազոտական կենտրոնի վերակառուցումը և ժամանակակից կենդանանոցի ստեղծումը:
3. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆեսոր Լ.Ավետիսյանի հետ համատեղ ներկայացնել՝
3.1. դասախոսների որակավորման գնահատման գործընթացում գիտական գործունեության չափաբաժնի գնահատման հստակեցված չափորոշիչներ,
3.2. ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի ներդրման մեխանիզմներ:
4. Հանձնարարել պրոռեկտոր պրոֆեսոր Ենկոյանին՝ մշակել և ներկայացնել համալսարանի 100-ամյակին ընդառաջ գիտական միջոցառումների նախագիծ:
5. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա. Ա. Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝ Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Բ.Գ.Թ. ԴՈՑԵՆՏ Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ